ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

02 հունիսի 2025թ.

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետի 2025 թվականի ապրիլի 30-ի № 154-Ա որոշումը և մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի մայիսի 7-ի № 185-Ա հրամանը՝ ս. թ. մայիսի 12-ից մինչև 23-ը ներառյալ.

ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի (իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խումբը) տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Հարություն Ալեքսանյանի (աշխատանքային խմբի ղեկավար), նույն վարչության՝ գլխավոր մասնագետ Սամվել Սահակյանի, գլխավոր մասնագետ Մայրանուշ Գալստյանի, ֆինանսական վարչության պետ Համլետ Ստեփանյանի, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հրաչյա Վարդանյանի, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Արթուր Հակոբյանի, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ Կամո Թումոյանի, ՔՀԵԿՎ Հողաշինության բաժնի պետ Գուրգեն Ավետիսյանի, առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ Շավարշ Արտաշյանի (աշխատանքային խմբի անդամներ) կողմից իրականացվեց իրավական հսկողություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 09-ի <<Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարը հաստատելու և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի մարտի 3-ի N 11-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 03-Ն հրամանով հաստատված իրավական հսկողության հարցաշարով, ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքում:

1. Իրավական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների, ինչպես նաև հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Իրավական հսկողության արդյունքների և հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունեմ՝ Նաիրի համայնքի ղեկավար Նորայր Սարգսյան:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը ներկայացվել է ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարին:

Աշխատանքային խումբ՝

ղեկավար՝ Հ. Ալեքսանյան,

անդամներ՝ Ս. Սահակյան,

Հ. Ստեփանյան,

Մ. Գալստյան,

Հ. Վարդանյան,

Գ. Ավետիսյան,

Ա. Հակոբյան,

Կ. Թումոյան,

Շ. Արտաշյան,

Նաիրի համայնքի ղեկավար՝ Ն. Սարգսյան:

13.06.2025թ.